ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

_____________ № _____________

Ձեր № ____________________

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ««ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Եղիազարյան

Ձեր 02.03.2015թ. N 37/37.2/3012-15 գրությամբ ներկայացված ««Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսված հետևյալ դրույթը՝ «եթե ստորագրող անձը չունի կամ չի կարող ունենալ նույնականացման քարտ, ապա հավաստագրման կենտրոնի կողմից էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը նրան տրվում է անձնագիր կամ կացության քարտ ներկայացնելու դեպքում» չի կարող գործել, քանի որ համաձայն «Հանրային ծառայությունների համարանիշի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի՝ հանրային ծառայությունների համարանիշը պարտադիր կիրառվում է հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ հաշվարկելու և վճարելու ժամանակ: Ընդ որում՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ հանրային ծառայությունների համարանիշը ամրագրվում է ՀՀ քաղաքացու նույնականացման քարտում, այսինքն հանդիսանում է նույնականացման քարտի բաղադրիչ: Միաժամանակ, «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ անձնագիր ստանալու դեպքում քաղաքացին պետք է

ներկայացնի նույնականացման քարտ, այսինքն նոր անձնագիր ստացողի համար նույնականացման քարտ ունենալը պարտադիր է, իսկ այն հարկ վճարողները, որոնք արդեն ունեն հին նմուշի անձնագիր, չեն կարող առանց հանրային ծառայությունների համարանիշի ստանալ էլեկտրոնային թվային ստորագրություն՝ հիմք ընդունելով վերը նշված հիմնավորումները:

Կից տրամադրվում է նաև վերոնշյալ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

***ՀԱՐԳԱՆՔՈՎ՝***

***ՊԱՎԵԼ ՍԱՖԱՐՅԱՆ***

Կատ.՝ Վիլհելմ Գրիգորյան
☎ (011) 800-137

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

*Նախագծով առաջարկվում է՝*

1. հստակեցնել «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքով նախատեսված էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի դադարեցման և կասեցման հիմքերը,

2. սահմանել, որ եթե ստորագրող անձը չունի կամ չի կարող ունենալ նույնականացման քարտ, ապա հավաստագրման կենտրոնի կողմից էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը նրան տրվում է անձնագիր կամ կացության քարտ ներկայացնելու դեպքում, ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում Երևան քաղաքում, և ոչ ուշ քան 10 աշխատանքային օրվա ընթացքում մարզերում: Նշված դրույթի սահմանումը կարող է հանգեցնել մի իրավիճակի, որ հարկերի վճարման և հաշվետվությունների ներկայացման համար լիազորված այն ֆիզիկական անձինք, որոնց նույնականացման քարտի վավերականության ժամկետը լրացել է կամ առաջին անգամ պետք է վճարեն հարկեր կամ ներկայացնեն հաշվետվություններ, կարող են այլևս ձեռք չբերել նույնականացման քարտ և չվճարել նույնականացման քարտի տրամադրման համար պետական տուրքի գումարը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կարող է ունենալ բացասական ազդեցություն, սակայն ազդեցության կոնկրետ չափը հնարավոր չէ հաշվարկել՝ համապատասխան տեղեկատվության բացակայության պատճառով:

Միաժամանակ Նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի, ինչպես նաև ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն: